

բարեալ կերակուր մարդկան, եւ ի ձեռն անաւթոյն Պաւղոսի ընդրելոյն զամենայն ինչ սուրբ սրբոց քարոզեցեր, դու եւ այժմ որ ի բարբարոսաց հարկս անկաւ, ոչ ըստ յաւժարութեան անսուրբ ինչ որպէս կարծեցին՝ ճաշակելով որոգայթեցան, ըզխիշդ մտաց մաքրեալ, եւ զքո պատուիրանդ հաստատեա ի սոսա առանց աղտոյ, եւ Հոգոյդ սրբոյ պատրաստեալ առ յընդունել անարատ եւ կենդանարար խորհրդոյ: Քանզի արհնի եւ փառաւորի ամենապատիւ եւ մեծ անուն Հաւր եւ Որդոյ» եւն: Հոս ալ յայտնի է պղծելոյն զրկումը Ս. Խորհրդէն, եւ այս հոգեւոր պաշտօնով վերստին մերձենալն անոր:

3. — Սրբունկ ուտելեաց: — Խտրականութեան հրատապ շրջանին ինչ որ պղծուած էր՝ կերակրեղէն կամ սպաս, նետուելու էր՝ այն կանոնով զոր տեսանք: Ուրիշ ազգեր ընդ հակառակն կը սրբէին զանոնք օրհնութեամբ: Տարօնացին կը մրմոյսն որ «Ասորիքն եւ Հոռոմքն զմրկեօրհնէրն արարին», եւ կը յարէ՝ թէ Հայք «զմկնօրհնէքն ատեցին» (Թէոփ. 306-7): Ինք ասով ոչ թէ մկնապղծին, այլ բուն իսկ մկան օրհնութիւնն ու ճաշակումը կ'իմանայ (անդ, 300, '1), ինչ որ սակայն մեր ցասկոտ ընդդիմախօսին թիւրի-